16. ՕՍԿԵ ԾԱՄ, ՕՍԿԵ ՃԿՈՒՆԴ

Կէղնի ու չէղնի իրեք ախպեր կէղնի։ Ուրանց կէղնի մեկ մամ։ Ըդ տղեկներու պապ նեճրվանչի կէղնի։ Տղեկներ կմեծնան, ամեկ ուրին նետ ու նետվանեղ մը կառնի։

Մամ կըսա տղեկներուն.—Լաո՛, ձըր պապ վարժվուկ էր, դուք՝ խըշիմ, չըք կէրնա նեճիրվանութեն էնի։

Տղեկներ կըսին.—Մեր պապ ինչ արհեստ օր էներ ա, մենք լա զէն կէնինք։

Օր մա մեծ տղեն կէլնի կէրթա նեճիրվանութեն էնի։ Շատ ու քիչ տեխ կէրթա, մեշի մը ռաստ կիգա։ Կպառկի կքնի, կտեսնա ըն դիեն հ՝ուշապ էկավ։ Տղեն զնետ կղարկա, չառնի հ՝ուշապ։ Հ՝ուշապ կֆշա, զտղեն կկլու։

Կմնա ժամանակ մա, միճնիկ ախպեր կըսա.—Հ՝ո՞ւր էղնի իմ պապու դուշման զիմ մեծ ախպեր կերեր ա։

Կկանչա զուր աստված, կէլնի, կընկնի ճամբախ, կըսա.—Էրթամ իմ ախպոր հայրֆ առնիմ։

Շատ ու քիչ ճամբախ կէրթա, սարի մա ռաստ կիգա, կպառկի հ՝ողի, փշու մը կմնա, հ՝ուշապ ըն դիեն կիգա, կըսա.—Հոգուտ, արևուտ մեռնիմ, ես քզի կգաշինք, անճրագ գտա։

Տղեն զնետ կղարկա, չառնի հ՝ուշապ։ Հ՝ուշապ կֆշա, տղեն կէրթա հ՝ուշպու փոր։

Պզտիկ ախպեր կիշկա, շիշկա, ախպերտանք չիգան, կկանչա զուր աստված, կընկնի ճամբախ։ Շատ ու քիչ տեխ կէրթա, շինութենի մը ռաստ կիգա։ Կիշկա դոնեն յոթ գլխցեն դեռ մա մըդուկ ա ադ տան մեշ, կկովին ինք ու դեռեն, զարկա զդեռեն կսպանա։

Կտեսնա ուր էտեռեն ուր մամ լա կիգա, զդեռեն կսպանա, յոթ գազ հոր կփորա, զդեռեն կթալա մեշ, հող կըլնա վրեն, կծածկա։ Մամ խաբար չունի։ Տղեն մամուն կըսա.—Ջուր չէղնի հ'ըլնաս իդա հորու վրեն։ Հ'ուշապ կա հորու մեշ, կսաղնա, կէլնի զքզի կուտա։

Տղեն կէլնի, կէրթա նեճիրվանութենի, հ'ըմն օր նեճիր կբըռնա, բիրա։ Օրմ' լա տղեն կէրթա, մամ կմտածա, կըսա. «Ես ջուր պտի ըլնամ հորու վրեն, սպանուկ հ'ուշապ իմա՞լ կսաղնա»։

Մամ շուր կըլնա հորու վրեն, հ'ուշապ կէլնի հորեն։ Ըմն օր տղեն օր կիգա, հ'ուշապ կմտնի հորու մեշ, տղեն օր կէրթա, հ'ուշապ կէլնի հըտ տղի մամուն կնստի կանի։ Օր մա հ'ուշապ տղի մամուն կըսա.—Իղ հըմլա չէղնի, արի զքու տղեն կորցու։

Մամ կըսա.—Իմա՞լ կորցունք։

Հ'ուշապ կհարցու.—Դու խըստու հիվընդցի, ֆլան սար հ'ուշապ մը կա, ընտեխ ծառ մը լա կա, շատ խորոտ խնձորներ կա վրեն, տղեն օր էրթա հ'ոնի, հ'ուշապ զինք կուտա։

Իրիկուն օր տղեն էկավ, մամ տըկտըկաց։ Տղեն հարցուց մամուց.—Հ'ո՞րի կտըկտըկաս։

Մամ կըսա.—Ուոր չէրթաս ֆըլան ծառի խնձորից ընձի չբերիս, ես կմեռնիմ։

Տղեն կանչեց զուր աստված, վերցուց զուր նետ-անեղ, ընկավ ճամբախ։ Շատ ու քիչ տեխ գնաց, սարի մա հանդիպավ։ Պառկավ քիչ մա։ Հ'ուշապ ըն դեռեն էկավ։ Տղեն տապավ քարի տակ, նետ մա զարկեց, հ'ուշապ գետին պատավ։ Քաշեց թուր, հ'ուշպու գլուխ կտրեց, գնաց ծառի վրեն, քաշեց խնձոր, էկավ հ'ուշպու անկշներ կտրեց, դրեց ուր ճեբ։

Էկավ խնձոր տվեց մամուն, մամուն ըսեց.—Հ'ուշապ սպանեցի, որ թը չըս ավտնա՝ անկշներ լա բերեր իմ։

Մամ նիաթ շատ էնեց։ Լուսըմտին տղեն էլավ գնաց, սար ու ձոր օլորտավ, խըզալ մա սպանեց։

Հ'ուշապ հորից էլավ, մամուն ըսեց.—Ըդմըլա չէղնի, զուր ուժ հարցու։

Իրիկուն տղեն էկավ, մամ նիաթ էնեց։ Տղեն հարցուց.—Նանե, հ՚որի՞ քու նիաթ կէնիս։

Մամ ըսեց.—Իդա խաղըր ես քզի պահեցի, գու զքու ուժ ընձի չասեցիր։

Տղեն ըսեց.—Իմ ուժ չվան ա։

Մամ չվան բերեց, տղի օտներուց կապեց, հընչի գլխու գագաթ։

Հ՚ուշպուն ըսեց.—Հորեն էլի, չախուն բի՝ մորթինք։

Տղեն ծըմըլտըկաց, չվան էղավ կտոր-կտոր։

Տղեն ըսեց մամուն.—Դու կուզիս զիս սպանի՞ս։

Մամ ըսեց.—Ես քու վրեն կխնդանամ։

Լուսմտին տղեն էլավ, գնաց սար։ Հ՚ուշապ տղի մամուն ըսեց.—Ջուր ուժ շիտակ հարցու։

Հ՚իրկուն տղեն տուն էկավ, մամ տղից հարցուց, ըսեց.—Քու ուժ ի՞նչ կփաթա։

Տղեն ասեց.—Գութնի ժընշիլ։

Բերեց գութնի ժընշիլ, փաթթեց տղի օտներուց, հընչի գլխու գագաթ։

Տղեն ծըմըլտըկաց։ Գութնի օղեր ֆոֆռացին։ Ըդ օր լա չկերցան տղին բանմ՚ էնեցին։

Էրկու օր ադ մեշը մնաց, էլ մա տղեն գնաց նեճրութենի, հ՚իրկուն տղեն տուն էկավ, մամ հարցուց.—Տղա լառ՚, քու ուժ ի՞նչ կփաթա։

Տղեն մամուն ըսեց.—Իմ ուժ որ թը պատա, անղան լար։

Մամ բերեց անղան լար, կապեց տղի պթներուց, հընչի գըլխու գագաթ։ Տղեն ծըմըլտըկաց, անղան լար զկաշին կտրեց, դիր մը լա ծըմըլտըկաց, զմիս կտրեց հասավ օսկոի վրեն։

Տղեն գետին պատավ։ Տղի մամ հ՚ուշապ կանչեց, հ՚ուշպուն ըսեց.—Բի՛ր չախուն, մորթինք։

Հ՚ուշապ շատ խղճաց, ըսեց.—Ջը մորթինք, չախուն բիր զաշքեր հանինք, տանինք սարի մա գլուխ թալինք։

Վերցին զտղեն, տարան սարի գլուխ թալեցին։ Տղի հետ կար էրկու հատ սև շուն։ Շներ կռայեցին, գացին սար, զտղեն գտան, շալկեցին, առան գացին։ Շատ ու քիչ տեղ գացին, վաճառականի մա հանդիպեցին։ Շներ վաճառական տեսան, վազան գացին վաճառականի հ՚առեջ։ Վաճառական հաց թալեց շներուն, շներ առան, էկան, վաճառական ընկավ հ՚ետև, էկավ տեսավ տղե մը պառկուկ

7—276

գետին, էրկու աչք լա հանուկ։ Շներ հաց տվին տղին, տղեն հաց կերավ։ Վաճառական շատ խղճաց տղին, հանեց տաս հատ մեճդա, տոպրակ մա հաց, ձեռք մա շոր տվեց տղին։

Տղեն հագավ շորեր, վաճառականին ասեց.—Ջիս ի տանիս աղրրի մա վրեն դրիս, իմ էրկու շուն քղի կիտամ։

Վաճառական վերցուց տղեն, տարավ աղրրի մա վրեն դրեց։ Տղեն էրկու շուն վաճառականին տվեց։ Վաճառական գնաց։ Տղեն էրկու օր մնաց աղրրի վրեն։ Աղոթք էնեց, աղաղակեց աստծուն, աստված տղի ձեն լսեց։ Տղեն քնավ։ Էլավ տեսավ ճնճուղ մա ուր գլխու վերև կճլվրլեր։ Ճնճուղ հ'ինք ուրին կխոսեր, կըսեր տղին.—Քու աչքեր հանած ին, թալած ին քու ջեր, վերցո՛ւ քու աչքեր, դի տեխրանք, կթալիմ թեբուր մա, զա՛ր աղրրի մեջ, քսա՛ քու աչքեր, օր քսեցիր՝ կսաղնա։

Տղի աջ աչք թալած են ճապ ջեր, ճապ աչք թալած են աջ ջեր։

Տղեն աչքեր դրեց տեխ, ընկավ չոքերու վրեն, ապըլթրպեց, զթեբուր գտավ, զարկեց ջրի մեջ, քսեց ուր աչքեր, օղորթ օր սաղցավ, ճախառ էկավ ուր աչքեր։

Տղեն հ'ոկցի էլավ գնաց քաղաք մա։ Տեսավ որ հ'ուշապ ջրի հ'առեջ առեր ա։ Գողտու մտավ պառվու մա տուն, պառվուն ասեց.—Ըս օր տեխ տուր հ'ոգա քնիմ։

Պառապ ըսեց.—Տեխ չկա։

Հանեց հինգ մեճդա տվեց պառվուն, պառապ ուր աման-չաման դիզեց վըր իրար, տղին տեխ տվեց։ Փշու մա մնաց, տղեն ջուր ուզեց։

Պառապ ըսեց.—Ջուր չկա, հ'ուշապ ջրի հ'առեջ առեր ա, հ'ըմն օր, հ'ըմն օր պտի օր ախչիկ մա տանին հ'ուշպուն, հ'ուշապ ուտա, նոր փշում մա ջուր թողա։

Քաղքի մեջ ամեկ տնեն ախչիկ մա կերեր ա, ըսօր թագավորի աղչկա դորն ա, թագավոր ջիվարեր ա, մենք լը մացեր ինք ծարավ։

Տղեն պառվուն ըսեց.—Կիտամ քղի հինգ հատ օսկի, ինչ դախ օր թագավորի աղչիկ բերին հ'ուշպու հ'առեջ, ընձի կսիս։

Պառապ էլավ գնաց ջրի մոտ կանավ, տեսավ օր թագավորի աղչիկ դհոլ ու զուռնով առան էկան։ Պառապ էկավ տղին ըսեց, տղեն էլավ գնաց, հ'ուշպու հ'առեջ կանավ։ Հ'ուշապ ֆշշաց, տղեն նետմ՝ ա զարկեց, մեկ լա ֆշշաց, թուրմ՝ ա զարկեց, հ'ուշպու վիզ փրցավ։ Հ'ուշապ պատավ գետի մեջ, գետ թամամի էղավ արուն։

Յոթն օր քաղքցիք ջուր չտարած են։ Ջուաբ տարին թագավորին, թը՝ զուշապ սպանած ին։

Թագավոր խնդացավ, կանչեց զուր վոզիրներ. դհոլ ու զուռնա փչեց, էլավ էկավ։

Քաղքցիք, երբ օր տեսան հ՚ուշապ սպանուկ էր, խնդացան, առան կժներ, վազան գետ, արընթրթախ ջուր լցին ու գացին։

Տղեն հ՚ուշապ օր սպանեց, փախավ։ Թագավորի աղչիկ ուր ձեռ զարկեց հ՚ուշպու արնի մեջ, զարկեց տղի պառեկին։ Տղի պառեկ էղավ սրբա։

Տղեն գնաց, գողտուկ մտավ պառվու տուն։ Դուռ փակեց ուր վրեն, պառվուն ասեց.—Մարդու չասիս։

Թագավոր էկավ զհուշապ տեսավ, ըսեց.—Իգա հ՚ուշպու սպանող օր բերիք իմ մոտ, ինչ օր ուզա՝ իտամ։

Դալալ տվեց կանչել, քաղաք քաղքունով էլավ էկան։ Շատ քաշեց, չկերցավ գտավ, հարց ու փորձ էնեցին, գացին պառվու տուն, տղեն տնեն դուրս հանեցին, բերեցին թագավորին ցուցցին։ Աղչիկ էկավ տեսավ, իմալ օր ուր արնոտ ձեռ զարկեր էր աղի պառեկին, հըլա արուն չըր կորեր էր։ Թագավոր խնդացավ, առավ զտղեն գնաց։

Տղեն ըսեց.—Ուզա՛, իտամ։

Տղեն պատասխանեց.—Հընչի օր իմ մարամ չկատարիմ, բան չըմ ուղիմ։

Թագավոր զուր աղչիկ տվեց տղին, յոթն օր, յոթ գիշեր զարկեցին, խաղցան, յոթն օր թըմավ, խորոտ հ՚օգե մա տվեց տղին։ Տղեն ու աղչիկ մեկտեխեցին։ Տղեն հեռունդ պառկավ աղչկաց։

Աղչիկ ասեց տղին.—Ես թագավորի մա աղչիկ իմ, դու աղքտի մա տղա իս, ինչե՞ն կէղնի դու ընձի չըս առնի։

Տղեն աղչկան ասեց.—Ուխտ կէնիմ առաջի աստծուն, ընձի մարամ մա կա, հընչի չկատարիմ, քղի չպիտի մոտենամ։

Տղեն էլավ լուսուն, ուզեց խուրջին մա օսկի, գրհել ձի մա, թալեց զուր նետվանեղ զուր թև, ընկավ ճամփախ։

Շատ ու քիչ տեխ գնաց, ըդ աղբրին ռաստ էկավ։

Տեսավ վերին դին, ճնճուղմ՚ էրկնուց էրես կճլվլեր, տղին ըսեց.—Կթալիմ թեբուր մը, կզարկիս աղբրի մեջ, կքսիս քու ծամեր, քու ծամեր կէղնին օսկեծամ, քու ճկունդ կզարկես աղբրի մեջ՝ կէղնի օսկի ճկունդ։ Իմ թեբուր կտանիս քու հետ հ՚ըմեն փորձանքներից կազատվիս։

Վերցուց թեբուր, զարկեց աղբրի մեջ, քսեց ուր գլուխ, ուր ծամեր, հ՚ըմեն էղավ օսկի։ Զարկեց ուր ճկունդ աղբրի մեջ՝ էղավ օսկի։ Տղեն վերցուց թեբուր դրեց ուր ծոց։ Էլավ հեծավ զուր ձին, ընկավ ճամփեն։ Շատ ու քիչ տեխ գնաց, շինութենի մա ռաստ էկավ։ Տեսավ օր հ՚ոդի յոթ հատ դևա, տեսավ շինության մեջ խորոտիկ աղջիկ մա։ Աղջիկ կիլեր, կաղաղակեր։

Տղեն հարցուց ախչկաց.

— Հ՚ո՞րի կիլաս։

Ախչիկ ըսեց.— Ես չի լամ, բա ո՞ր իլա։ Ընձի կեր յոթ հատ ախպեր, յոթ լա գնացած ին նեճրվանութենի։ Իդա յոթ հատ դևեն էկած ին զիս ի կուտին։

Տղեն կքաշա գնետ, կղարկա դևեսներուն, զյոթ դևե լա կսպանա, յոթ դոնեն ներս կմտնի, կէրթա, ախչկա մոտ։

Ախչկան կըսա.— Հընչի իմ մարամ տեխ չի գա, ես քզի չըմ տանի։

Ախչիկ կթողա մինակ, կէլնի, կընկնի ճամբաս։ Շատ ու քիչ տեխ կէրթա, կհասնի ուր տուն։ Մամ զտղեն կտեսնա, խըստումըստու կխնդանա։ Տղեն հ՚ուշպուն կըսա.— Հորու միջեն էլի, զթոնդիր վառա։

Հ՚ուշապ հորեն կէլնի, զթոնդիր կվառա։ Տղեն կբերա զմամ կթալա մըջ թոնդրան, մամ կիրիցի։ Տղեն կհանա, տաս հատ օսկի կիտա հ՚ուշպուն։ Տղեն կդառնա կիգա ըդ ախչկա քոչկի դուռ կկանի, կղարկա զդուռ կկոտրա, կմտնի տուն։ Ախչկա յոթ ախպեր նեճրութենեն էկած, հանդ ին տուն։ Ցոթ ախպեր կտեսնան զտղեն, կվերցուն գնետ կհասնին տղին, տղին կասին.—Դու ի՞նչ մանուկ մարդ իս, զմըր դուռ կկոտրիս։

Ախչիկ կիլա, կթալվի ախպըրտոց օտներ, կըսա.— Ցոթ հատ դևա էկած ին, զիս ի կուտին, տղեն զարկեց սպանեց։

Տղեն ջիրեն կհանա յոթ դևեններու անկջներ, կցուցու ախպըրտոց։

Ախպրտանք կխնդանան, կէլնին զուրանց քուր կիտան տղին։ Տղեն կառնի զախչիկ, կէրթա թագավորի սարեն։ Իրիկուն կէղնի, կէրթա ուր տուն։ Թագավոր տղի գալ կտեսնա, կխնդանա, կբերա զըդ ախչիկ լը կպսակա վըր տղին, կիտա տղին։ Վաթսուն ձի, վաթսուն հատ մշակ, քառասուն հ՚օդա, թաժա հարսնիք կէնա, յոթն օր, յոթ գիշեր կխաղցու, նոր տղեն կհասնի ուր մուրազին։